

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ ԱՐԱԶԲԵԿԻ

**ՆՈՐՈՎԻ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՆ**

**ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թ. Ս. Հարությունյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ի. Կ. Կարապետյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Լ. Հ. Ղուկասյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. սեպտեմբերի 20-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

մանկավարժական գիտ.թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ.

Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Պատմահասարակական փոփոխությունները, բարոյամշակութային արժեհամակարգի վերաիմաստավորումը, արժեքային կողմնորոշումների հերթափոխությունը, դրանց սոցիալ-խմբային բևեռացումը, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային բարեփոխումներն ենթադրում են նորովի մոտեցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին:

Հասարակական, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը խորապես ազդում են երիտասարդության, հատկապես ուսանողների սոցիալականացման գործընթացի վրա, նպաստում սոցիալական լարվածությանը: Հասարակության հոգևոր կյանքում առկա բացասական գործոններն ուղեկցվում են կրթամշակութային գործընթացների խաթարմամբ, հանգեցնում են երիտասարդության մեծամասնության մեջ բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորմանը, երբեմն էլ՝ կորստին: Առաջնային են դառնում նյութական արժեքների հետ կապված հիմնախնդիրները. ինքնանպատակ են դառնում իմացական և բարոյական ինքնակատարելագործման, ինքնադաստիարակության, համակողմանի, ներդաշնակ, ստեղծագործական զարգացման գաղափարները: Բարոյամշակութային բարձր հատկանիշները՝ ապրումակցումը, համակեցությունը, հանդուրժողականությունը, հարգանքն իր և այլոց նկատմամբ մղվում են երկրորդ պլան: Ուսանողական միջավայրում առկա աշխարհայացքային և բարոյամշակութային ճգնաժամերը երբեմն ավելի են սրվում զանգվածային տեղեկատվական միջոցներով:

Վերը նշված հիմնահարցերը պահանջում են նորովի մոտեցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին: Այն ապագա մասնագետների՝ մանկավարժի, բժշկի, իրավաբանի, տնտեսագետի պատրաստության գործընթացի կարևորագույն բաղադրատարրն է: Սրանով է պայմանավորված հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է հիմնախնդրի գիտատեսական խոր վերլուծությամբ և ուսանողների շրջանում սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների մշակմամբ հիմնավորել ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորումը սոցիալ-տնտեսական և գլոբալացման նոր պայմաններում:

Հետազոտության խնդիրներն են.

- Փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, արքեոլոգիական

գրականության վերլուծության հիման վրա մեկնաբանել «բարոյամշակութային արժեք» հասկացությունը:

- Բացահայտել ժամանակակից ուսանող երիտասարդության բարոյամշակութային արժեքների զարգացման հիմնական ուղղությունները:

- Մեկնաբանել գլոբալացման պայմաններում ուսանողի ինովացիոն տիպի ձևավորման գործընթացում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը:

- Վերլուծել դասախոս-ուսանող փոխհարաբերությունները վերաիմաստավորվող բարոյամշակութային արժեհամակարգի պայմաններում:

- Մշակել և սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքներով հիմնավորել ժամանակակից ուսանողի բարոյամշակութային արժեքների, ինովացիոն տիպի ձևավորման նոր մոդել:

Հետազոտության գիտական նորոյթն է.

1. Վերլուծվել և նորովի մեկնաբանվել է «արժեք» հասկացության փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, աքսելոգիական հիմքերը:

2. Բացահայտվել են գլոբալացման պայմաններում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը սոցիալական տարբեր ինստիտուտներում:

3. Մշակվել է բարձրագույն կրթության բարեփոխվող միջավայրում ուսանողի ինովացիոն տիպի մոդել՝ հիմք ընդունելով բարոյամշակութային արժեքների ձևավորվածության մակարդակները:

4. Անցկացվել է ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ և կատարվել դրանց վերլուծություն:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը տարբեր սոցիալական ինստիտուտներում վերաիմաստավորում և վերափոխում է ուսանողի անձի իրավիճակային հարաբերություններն արտաքին կենսավորձի արդյունքում՝ աշխարհաճանաչմանը զուգընթաց:

2. Բարձրագույն կրթության համակազում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորումն արդյունավետ է իրականանում դասավանդողի և ուսանողի՝ ազգային, համամարդկային, մասնագիտական, հոգևոր-բարոյական արժեքների վրա հիմնված ստեղծագործական համատեղ գործունեության, դասավանդվող առարկաների մարդասիրական ուղղվածության արդյունքում:

3. Բարձրագույն դպրոցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման արդյունավետությունն ապահովում է այդ գործընթացի կազմակերպման համապատասխան մշակված մանկավարժական պայմաններով՝ կրթական ծառայությունների ազատականացում և մրցակցային դաշտի ձևավորում, մասնագիտական պատրաստություն իրականացնող կառույցների իրավասությունների ընդլայնում, կառավարչական գործառույթների, կառավարման մեթոդների, կառավարման ոճերի վերանայում:

4. Ուսանողի ինովացիոն նոր տիպի մոդելն իր բաղադրատարրերով նպաստում է ուսանողի բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորմանը և զարգացմանը:

5. Բարոյամշակութային արժեքների ձևավորումն ապահովում է հետագա մասնագիտական գործունեության արդյունավետությունը և կայուն նախադրյալներ է ապահովում ուսանողի լիարժեք սոցիալականացման համար:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Բացահայտվել և տեսականորեն վերլուծվել են ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման առանձնահատկություններն արդի սոցիալ-տնտեսական, գլոբալացման պայմաններում, մեկնաբանվել է «բարոյամշակութային արժեք» հասկացության էությունը: Տեսականորեն վերլուծվել են կրթական արդի բարեփոխումների համատեքստում ուսանող-դասախոս միջանձնային փոխհարաբերությունները բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությամբ, որի հիման վրա մշակվել է ուսանողի ինովացիոն նոր տիպի մոդել:

Հետազոտության արդյունքները հաջողությամբ կարող են հիմք հանդիսանալ բուհում մասնագիտական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործում՝ հաշվի առնելով ուսանողի բարոյամշակութային արժեքների ձևավորման նոր ինովացիոն տիպը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից: Այն կազմում է համակարգչային 168 էջ, բովանդակում է 1 գծապատկեր, 11 աղյուսակ, 18 տրամագիր:

Ներածության մեջ հիմնավորված են ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, սահմանված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

«Անձի բարոյամշակութային արժեքների ձևավորման գիտատեսական հիմքերը» խորագրով **առաջին գլուխը**, որը բաղկացած է չորս ենթագլխից, դիտարկել են բարոյամշակութային արժեհամակարգի պահպանումը՝ որպես պետական քաղաքականության, անվտանգության գերակա խնդիր: Ուսումնասիրվել և վերլուծվել են պետական քաղաքականության մի շարք խնդիրներ, իրավանորմատիվային փաստաթղթեր, ներկայումս ՀՀ նախարարությունների կողմից իրականացվող տարբեր ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս համադրելու և պահպանելու համամարդկային, ազգային արժեքները: Արդյունքում ներկայացնվել են ուսանողի անձի արժեքային կողմնորոշումների շրջանակի բաղադրամասերը՝ հիմնվելով «արժեք» հասկացության փիլիսոփայական, արքևելոգիական, հոգեբանամանկավարժական հիմքերի վրա: Դիտարկվել է «արժեք» հասկացության արքևելոգիական հիմքերը՝ օբյեկտիվ-իդեալիստական, սուբյեկտիվ-իդեալիստական, բնահարմարողական, սոցիոլոգիական, դիալեկտիկամատերիալիստական մոտեցումները: Ներկայացված են ուսումնառության ընթացքում ուսանողների բարոյամշակութային կողմնորոշումները, իսկ ուսանողների բարոյամշակութային վարքագիծը վերլուծելու համար մեթոդաբանական հիմքում ընկած է Մ. Կազանի բարոյամշակութային արժեքների, կողմնորոշումների, բնութագրումների համակարգված մոտեցումը՝ սոցմշակութային միջավայրում՝ գնահատող սուբյեկտի և արժեքների կրող փոխհարաբերությունների ընթացքում: Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացը նորովի ներկայացման հնարավորություն է տվել մանկավարժական արժեբանության ժամանակակից հիմքերի ուսումնասիրությունը՝ Մ. Ռոկիչի արժեքների հատկանիշները, Ռ. Մարդյանի արժեքային դաստիարակչական համակարգերի ավանդական, հումանիստական դաստիարակչական համակարգերը դիտարկելիս: Ուսանողի սոցիալականացման գործընթացում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցության հիմնահարցը հնարավոր է լիարժեք քննարկել, եթե այն դիտարկվում է գլոբալացման արդյունքում՝ ասիմիլացիոն, բազմամշակույթ, ներմշակութային տիպային մոդելները ներկայացնելիս, ուր ազգային և համամարդկային արժեքները գտնվում են որոշակի հիեարխիկ, երբեմն նաև


գերակայող վիճակում:




Ատենախոսության՝ **«Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման առանձնահատկությունները արդի սոցիալ-տնտեսական պայմաններում»** հինգ ենթազխից բաղկացած **երկրորդ** գլխում քննարկված են 21-րդ դարի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային մարտահրավերները, բարձրագույն դպրոցի բարեփոխումները որպես ուսանողների արժեհամակարգի նորովի մոտեցման նախապայման: Կրթական բարեփոխումների ընթացքում ուսանողների արժեհամակարգի վերաիմաստավորումը կարելի է բնութագրել հետևյալ երեք չափանիշներով՝ համապիտանելիությամբ, հիմնարարությամբ և հարաբերական շարժունակությամբ: Վերոթվարկյալ չափանիշները հնարավորություն են տալիս բնութագրելու ուսանողների բարոյամշակութային կողմնորոշումներն ըստ համապատասխան արժեքային մակարդակների՝ **ինտելեկտուալ, դրդապատճառային և վարքագծային**: Ինտելեկտուալ մակարդակը բնութագրում է ուսանողների ուսումնառության ընթացքում ձեռք բերված բարոյամշակութային գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգը, որը պետք է բավարարի նոր մասնագիտական արժեհամակարգին՝ նախադրյալներ ստեղծի ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնահիացման համար: **Ինտելեկտուալ** մակարդակը բխում է բուռն իրականացվող բովանդակային բարեփոխումներից, կրթական ծրագրերի հումանիստական ուղղվածությունից: **Դրդապատճառային** արժեքային մակարդակը բնութագրական, որակական չափանիշ է, որի դեպքում գիտելիքահեն կրթական հարացույցը փոխարինվում է անձնակողմնորոշիչ, զարգացող հարացույցով, որի ընթացքում դասախոսակենտրոն ուսուցման փոխարեն ներդրվում է ուսանողակենտրոն ուսուցում՝ դասախոս-ուսանող հաղորդակցական մոդելում՝ ուսանողը որպես արժեքները գնահատող և արժեքներ կրող ակտիվ սուբյեկտ: Կրթական, արժեքային պահանջմունքների բավարարումը համապատասխան դրդապատճառային հիմք է ստեղծում կրթական միջավայրում բարոյամշակութային վարքածի ձևավորման և դրսևորման համար: Դրան նպաստում են դասավանդման, ուսումնառության, գնահատման նորագույն մեթոդներն ու տեխնոլոգիաները: Հիմք ընդունելով ուսանողների տարիքային, կազմաբնախոսական, հոգեբանական, անհատական, սեռային առանձնահատկությունները բարոյամշակութային արժեքների ձևավորման ընթացքը կարելի է ներկայացնել երկու փուլով՝ 1. ուսանողի կարգավիճակին համապատասխան նոր, մասնագիտական արժեքների յուրացում, 2. մտավորականի, ապագա մասնագետի սոցիալ-մշակութային արժեքներին համապատասխան սոցիալական դերի յուրացում:

Դասախոս-ուսանող բարոյամշակութային արժեքների ձևավորման ուղիները պետք է իրականացնել երկու փոխլրացնող մասնաբաժնով՝ լսարանային և արտալսարանային աշխատանքներում: **Լսարանային** մասնաբաժնում՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի շրջանակներում համապատասխան կրթական ծրագրում բարոյամշակութային բաղադրամասի ընդգծում, կարևորում, բարոյամշակութային գիտելիքների ձեռքբերում, բարոյամշակութային մտածողության ձևավորում, բարոյամշակութային սկզբունքների, համոզմունքների պահպանում, հաղորդակցման ընթացքում բարոյամշակութային վարքագծի դրսևորում, բարոյամշակութային ինքնագիտակցության ձևավորում, ինքնաիրացում: Կազմակերպման ձևերն են՝ սեմինարներ, քննարկումներ, դասախոսություն-բանավեճ, թեմատիկ ռեֆերատներ, ինքնավերլուծական բնութագրեր, մասնակցություն կառավարման աշխատանքներին, ուսանողների ինքնակառավարման օրեր, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ներկայացնելու ուսանողների շահերը, մոտեցումները, տեսակետները, ակնկալիքները: **Արտալսարանային աշխատանքներում** կուրսղեկական ակտիվ աշխատանք, ոլորտի կայացած մասնագետների, արվեստագետների, մշակույթի գործիչների հետ հանդիպումներ, դասախոսների անձնական օրինակների պարզաբանում, մրցակցության ձևավորում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում տարբեր անվանակարգումներով. ամենակտիվ, բարի, հանդուրժող, ապրումակցող, ընկերասեր, ստեղծագործող ուսանող /կուրսից անցնելով ֆակուլտետի, ապա բուհի շրջանակ, միջբուհական շրջանակ/, ուսումնական տարվա ընթացքում կուրսի բարոյամշակութային արժեքների ձևավորման մակարդակը բարձրացնող միջոցառումների պլանավորում, այց արվեստի և մշակութային հաստատություններ, ակտիվ մասնակցություն բուհական մամուլին, այց ծերանոցներ և մանկատներ, կամավորական աշխատանքների կազմակերպում, ակտիվ մասնակցություն ներբուհական կյանքին և միջբուհական աշխատանքներին: Մեր կողմից անցկացված զրույցների և հարցումների ընթացքում պարզվեց, որ արտալսարանային աշխատանքները տարբեր բուհերի, անգամ ֆակուլտետների կտրվածքով միանշանակ չեն, որոշ դեպքերում գրեթե չեն իրականացվում, իսկ կուրսղեկական ինստիտուտը ձևավորված չէ, եթե նույնիսկ ձևավորված է, ապա այն ձևական բնույթ է կրում: Ուսանողները վերաիմաստավորվող արժեհամակարգում նույնպես ակնկալում են նոր հաղորդակցման մոդելներ, որտեղ պետք է դասախոս-ուսանող փոխհարաբերությունները կառուցվեն նորովի: Այս տեսակետից աշխատանքում ներկայացված է ուսանողի ինովացիոն տիպը:

Գծապատկեր 1.

Ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորման մոդել





Քննարկված են ինովացիոն տիպի ուսանողի նոր կարգավիճակի ձևավորման ռազմավարական քայլերը, առաջադրվել են կանխադրույթները, որոնց ապահովման դեպքում հնարավոր է իրականացնել ուսանողի գործունեության կառուցողական ալգորիթմն ըստ մասնագիտական-անձնային, պրակտիկ-կիրառական չափանիշների: Հաջորդիվ դիտարկել ենք ինովացիոն ուսանողի հետևյալ մանկավարժական կարողությունները՝ տարաբնույթ մտածողության, դիդակտիկական, հեղինակային-անհատական, գիտամանկավարժական, պերցեպտիվ, հաղորդակցական, կազմակերպչական, հոգետոմատիկ, արժեքային և մասնագիտական ներհայեցողական: Քննարկվող ռազմավարական քայլերը, կանխադրույթները, չափանիշները, կարողությունները, բաղադրամասերն ու պայմանների համակարգումը հնարավորություն տվեցին ներկայացնելու 5 կառուցամասերից բաղկացած մոդել: Հիմնավորված է, որ ուսանողի ինովացիոն նոր տիպը մոդելավորելիս անհրաժեշտ է առաջնային խնդիր դիտարկել ուսանողի բարոյամշակութային արժեհամակարգի՝ անձնային, ազգային, համամարդկային ձևավորումը՝ որպես մեկ ամբողջական համակարգ ուսումնառության ընթացքում:


Ատենախոսության **երրորդ** գլխում ներկայացրված են ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը: Հետազոտության շրջանակներում սոցիոլոգիական հարցման նպատակից ելնելով առաջադրվել են հետազոտության խնդիրներ և ընտրվել հետազոտական բազա: Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետը, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանը, Երևանի Հյուսիսային համալսարանը, Երևանի «Գլաձոր» համալսարանը: Հետազոտությունն իրականացվել է 16-30 տարեկան ուսանողների շրջանում: Հարցմանը մասնակցել են 1500 ուսանողներ ՀՀ տարբեր մարզերից՝ Երևան, Շիրակ, Սյունիք, Գեղարքունիք, Կոտայք: Հարցման մասնակիցների 59% -ը իգական սեռի են, իսկ 41% -ը՝ արական: Սոցիոլոգիական

հարցումների մշակման համար օգտագործվել են Ms Excel 2013 և SPSS 6.0 ծրագրային փաթեթները:

Հարց 1. «Արդյոք Դուք տեսնո՞ւմ եք Ձեր շրջանում բարոյամշակութային արժեհամակարգի սահուն անցում միջսերնդային հաղորդակցման ընթացքում»:

Պատասխանների արդյունքները հետևյալն են.

**Տրամագիր 1.
Բարոյամշակութային արժեհամակարգի սահուն անցման
ցուցանիշներն ըստ հարցման պատասխանների**




Պատասխանողների միայն 28,0 % է դրական պատասխանել, 16,0 %-ը համարում է, որ բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների փոխանցում տեղի չի ունենում, իսկ հարցվողների 56,0 % -ը դժվարացավ պատասխանել: Այս ամենը վկայում է այն մասին, որ մեր հասարակությունում դեռևս առկա են միջսերնդային բարդ հարաբերություններ, որոնք հատկապես սրվել են գլոբալացման պայմաններում արժեքային համակարգի փոփոխման ընթացքում: Առավել վտանգավոր է անտարբեր, չեզոք պատասխանների բարձր տոկոսը, քանի որ գլոբալացման պայմաններում կարող է աշխատել արժեքային համակարգի ասիմիլիացիոն համակարգը, որի ընթացքում ազգային արժեքները պարզապես կարող են լուծվել և ոչնչանալ: Ազգային, բարոյական, մշակութային արժեքները փոխանցվում են ծնողներից որդիներին, իսկ ուսանող-երիտասարդների կողմից նման արժեքներից հրաժարվելը գործնականում նշանակում է ավագ սերնդի կյանքի ոճի և մտքի մերժում:

Հարց 2. «Ինչ եք կարծում, արդյո՞ք ՀՀ բարոյամշակութային արժեհամակարգը, մշակութային կյանքը, ճգնաժամի մեջ է»: Հարցման

արդյունքները հետևյալն են.

Տրամագիր 2.
ՀՀ բարոյամշակութային արժեհամակարգի, մշակութային կյանքի ճգնաժամի վերաբերյալ հարցման արդյունքները



Հարցման պատասխանողների 62,6% նշել է, որ բարոյամշակութային արժեհամակարգը ճգնաժամի մեջ է, և միայն 16,3% նշել է, որ նման ճգնաժամ չի նկատվում: Մտահոգում է այն փաստը, որ հարցվողների 21,1 %, այսինքն՝ գրեթե մեկ երրորդ մասը, դժվարացավ պատասխանել: **Առաջին խումբի** ճգնաժամային գնահատումն անմիջականորեն կապված է ուսանող-երիտասարդների կյանքի անվտանգության, ֆիզիկական և հոգևոր առողջության, ընտանիքի պահպանման հետ: **Երկրորդ խումբը** կապված է ուսանող-երիտասարդ անձանց կյանքի հեռանկարներից, այսինքն՝ այն ինչին ուսանող-երիտասարդը ձգտում է և ուզում հասնել կյանքում: Վաղվա օրվա նկատմամբ վախ՛ն ու անրոշությունը հանգեցնում են բարոյամշակութային արժեհամակարգի փոփոխմանը:

Երրորդ խումբը կարելի է անվանել «սոցիալ-քաղաքական»: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ-ի երիտասարդությունը բարոյամշակութային արժեհամակարգում է գնահատում քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու ազատությունը: Նրանք ձգտում են


հնարավորինս շատ մասնակցել հասարակական կյանքին, կարգավորել պետության և անձի միջև եղած հարաբերությունները: Ստացված տվյալները վկայում են, որ ՀՀ ներկայիս երիտասարդությունը դեռևս բավարար քաղաքական ակտիվ սոցիալական խումբ չի հանդիսանում: Հարցվածների մեկ քառորդ մասը կարծում է, որ ուսանող-երիտասարդներն ունեն բարձր հայրենասիրության գիտակցում: Չնայած զգալի դժվարություններին, որոնց բախվում են ուսանող-երիտասարդները, նրանք պահպանում են հավատն ու լավատեսությունը, որ հետագայում դրական տեղաշարժեր կդիտվեն նրանց սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյամշակութային և հասարակական կյանքում:

Հարց 3. «Ո՞վ է հանդիսանում Ձեզ համար բարոյամշակութային արժեքների կրող իդեալ»:

Հարցման արդյունքները հետևյալն են.

Տրամագիր 3.

Բարոյամշակութային արժեքների կրող իդեալն ըստ հարցման արդյունքների



Հարցվողների 42,3%-ի համար այդ կրող իդեալը ծնողն է, 18,2 %-ը նշում է, որ ընկերներն են, 8,9 %-ը՝ հարազատները, 9,3 %-ը՝ դասախոսները, 12,5 %-չունի նման իդեալ, իսկ 8,8%-ը հետևում է իր մտացածին իդեալներին: Այս ամենը վկայում է, որ ժամանակակից երիտասարդ ուսանողների մոտ դեռևս պահպանված է այն միտումը, որ ծնողն առաջնային դիրք ունի անձի բարոյամշակութային արժեքների կրելու և փոխանցելու գործում:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը վկայում է նաև այն մասին, որ կյանքում հաջողակ լինելը նույնպես դիտարկվում է արժեք, և որքան էլ փոխվեն հաջողության հասնելու միջոցներն ու մեխանիզմները, միևնույն է, այն մնում է սոցիալականացման ընթացքում անձի ձգտումների առանցքում:

Կյանքում յուրաքանչյուրը հաջողակ լինելու իր չափանիշներն է մշակում,

որտեղ նյութական և հոգևոր արժեքներն ունեն իրենց համապատասխան ենթադասումները: Նրանցում՝ հավատարիմ ընկերների առկայությունը, հոգևոր հավասարակշռությունը, բարձր աշխատավարձը, անհրաժեշտ գործնական կապերը, հետաքրքիր աշխատանքը, սեփական բիզնեսի առկայությունը, հանգիստ և ապահով կյանքը, անվտանգության համոզվածությունը, շրջապատի ընդունումը, փառքը, սեռական բավարարվածությունը, սիրո, իշխանության, սեփական աշխատանքի վարպետ լինելը, անկախությունը, ազատությունը ստանում են տարբեր դասակարգում, դաս-դասում:

Բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ենթադասության մեջ հոգևոր արժեքները փոքր-ինչ զիջում են նյութական արժեքներին: Հարցվողների 57,6%-ը որպես բարձրագույն արժեք գերազնահատում է նյութական արժեքները, իսկ 27,9%-ը առաջնայնություն է տալիս բարոյամշակութային արժեքներին, իսկ մնացած 14,5%-ը գտնում է, որ արժեքները պետք է ընդունել ըստ իրավիճակի՝ յուրաքանչյուր դեպքում ընտրելով համապատասխան իրավիճակային որոշում: Նման որոշումները քննադատելի չեն, քանի որ դրանք պարտադրվում են ներկայիս շուկայական հարաբերություններով:

Անհատական գրույցները փաստում են, որ շուկայական տնտեսության անցումն ավելի շատ է նսեմացնում հասարակության հոգևոր արժեքները: Հարցվողների 28,2%-ը մտահոգված է, թե ինչպես կարելի է դիմակայել հոգևոր արժեքների կորստին, որը փոքր ազգերի համար նաև գոյապահպանական և անվտանգության հիմք է:

Այսպիսով՝ մեր հետազոտությամբ հաստատվեց, որ ժամանակակից պայմաններում ուսանող-երիտասարդ սերնդի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումներում առանցքային է ապագայի կառուցման հիմնախնդիրը, որը, սակայն, դեռևս անկայուն է: Այդ հիմնախնդիրն ուսանող-երիտասարդները կապում են երկրի կայուն սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական իրավիճակի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, արտելոգիական գրականության վերլուծության հիման վրա սահմանվել է, որ «բարոյամշակութային արժեք»-ը բազմիմաստ և բազմամակարդակ հասկացություն է, որը բնութագրում է իրերի, երևույթների բարոյական և մշակութային կողմնորոշիչները և գոյություն ունի առանձին անձերի ու

սոցիալական խմբերի հարաբերություններում:

2. Նորովի մոտեցումն ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին ենթադրում է ոչ թե տեղայնացված աշխատանք առանձին սոցիալական ինստիտուտներում, այլ պետական քաղաքականության գերակա, անվտանգության խնդիր, որի ժամանակ պետք է հաշվառվեն բարոյամշակութային համակարգի առկա վիճակը, ռիսկային, իրավիճակային փոփոխությունները և ակնկալվող վերջնարդյունքները:

3. Ժամանակակից ուսանող երիտասարդության բարոյամշակութային արժեքների ձևավորումը գլոբալացման պայմաններում իրականանում է երեք հիմնական արժեքային մոդելներում՝ ասիմիլիացիոն, բազմամշակույթ և ներմշակութային, որտեղ ազգային և համամարդկային արժեքները գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ:

4. Ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորման մեր կողմից մշակված մոդելը ներառում է այդ գործընթացի նպատակը, բովանդակային բաղադրամասն իր բաղադրիչներով, սովորողների բարոյամշակութային կոմպետենտության ձևավորման գործընթացի կազմակերպումը, գործառույթները և կրթական վերջնարդյունքները:

5. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն արդյունավետ է իրականանում տեղեկատվական-հաղորդակցական, ինովացիոն, բարեփոխվող կրթական նոր միջավայրում դասախոս-ուսանող սուբյեկտ-սուբյեկտային համագործակցության արդյունքում՝ ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում տարբեր աշխատանքային ձևերի զուգակցմամբ, որտեղ ուսանողն արժեքների ակտիվ կրող, յուրացնող և գնահատող սուբյեկտն է:

6. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորումը պայմանավորված է ոչ միայն բուռն դասավանդողների բարոյական, հոգևոր, մշակութային և մասնագիտական կոմպետենտությամբ, մշակութային բարձր պատրաստվածությամբ, հաղորդակցման որակներով, կազմակերպական, խորհրդատվական, վերահսկողական և այլ գործառույթների տիրապետմամբ, այլև միջսուբյեկտային փոխհարաբերություններով, որտեղ ներդաշնակվում են մասնագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

7. Երիտասարդ սերնդի մեծամասնության նորովի բարոյամշակութային կողմնորոշման հիմնական նպատակը գլոբալացման պայմաններում 21-րդ դարի մարտահրավերներին, նոր սոցիալ-տնտեսական պայմաններին հարմարվելու ռազմավարությունն է: Երիտասարդական միջավայրի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայմանը պետական

արդյունավետ գաղափարախոսությունն ու քաղաքականությունն է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սարգսյան Ա. Ա. Անձի «բարոյական մշակույթ» հասկացության դիտարկումը փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական տեսանկյունից: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ, Վանաձոր, թիվ 4, 2006թ., էջ 92-95:

2. Սարգսյան Ա. Ա. Ուսանողների բարոյական արժեքների ձևավորման առանձնահատկությունները (մաս 1): «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, 2008թ. թիվ 3-4, էջ 117-120:

3. Սարգսյան Ա. Ա. Ուսանողների բարոյական արժեքների ձևավորման առանձնահատկությունները (մաս 2): «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, 2009թ. թիվ 1-2, էջ 154-157:

4. Սարգսյան Ա. Ա. Ուսանողների բարոյական մշակույթի ձևավորման ուղիները: Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2010թ., էջ 112-119:

5. Սարգսյան Ա. Ա. Ռեսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին վերաբերող սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն: «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, 2014թ., թիվ 3-4, էջ 33-36:

6. Սարգսյան Ա. Ա. Գլոբալացման պայմաններում համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2015թ., թիվ 2/43/, էջ 177-181:

7. Սարգսյան Ա. Ա. Վերաիմաստավորվող արժեհամակարգում ուսանողի ինոլագիոն տիպը: «Մանկավարժական միտք» հանդես, Եր., «Ձանգակ» հրատ., 2015թ., թիվ 4, էջ 74-82:

САРГСЯН АСЯ АРАЗБЕКОВНА
НОВЫЙ ПОДХОД К ПРОБЛЕМЕ ФОРМИРОВАНИЯ МОРАЛЬНО-
КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ СТУДЕНТОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-«Теория и история педагогики». Защита диссертации состоится 2016 года в 14⁰⁰ ч. на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Историко-общественные изменения, переосмысление системы морально-культурных ценностей, смена ценностных ориентаций, их социально-групповая поляризация, социально-экономические, образовательные и культурные реформы предполагают новый подход к проблеме формирования морально-культурных ценностей студентов.

Общественные, социально-экономические кризисы глубоко влияют на молодежь, особенно на процесс социализации личности студента, способствуют социальной напряженности. Имеющиеся в духовной жизни общества негативные факторы сопровождаются искажением образовательно-культурных процессов, приводят к переосмыслению морально-культурных ценностей у большей части молодежи, иногда и к потере этих ценностей. Первостепенными становятся проблемы, связанные с материальными ценностями, идеи познавательного и нравственного самосовершенствования, самовоспитания, всестороннего, гармоничного творческого развития становятся самоцелью.

Целью исследования является обосновать формирование морально-культурных ценностей студентов в новых социально-экономических условиях и в условиях глобализации с помощью глубокого научно-теоретического анализа проблемы и обработкой результатов социологических исследований среди студентов.

Задачами исследования являются следующие:

- истолковать смысл понятия «морально-культурная ценность» на основе анализа философской, психологической, педагогической, аксиологической

литературы;

- выявить основные направления развития морально-культурных ценностей современной студенческой молодежи;
- истолковать соотношение национальных и общечеловеческих ценностей в условиях глобализации в процессе формирования студентов инновационного типа;
- проанализировать взаимоотношения преподаватель-студент в условиях переосмысливающейся системы морально-культурных ценностей;
- разработать и с помощью результатов социологических исследований обосновать новую модель формирования морально-культурных ценностей инновационного типа современного студента.

Научная новизна исследования.

1. Проанализированы и по-новому интерпретированы философские, психолого-педагогические, аксиологические основы понятия «ценность».
2. Выявлено соотношение национальных и общечеловеческих ценностей в условиях глобализации в различных социальных институтах.
3. Обработана новая инновационная модель студента в реформирующейся среде высшего образования, взяв за основу уровни сформированности морально-культурных ценностей.
4. Проведены социологические опросы по проблеме формирования морально-культурных ценностей студента и проведен их анализ.

Теоретическая значимость исследования.

1. Выявлены и теоретически проанализированы особенности формирования морально-культурных ценностей студентов в социально-экономических и условиях глобализации, интерпретирована сущность понятия «морально-культурная ценность».
2. Проанализированы и по-новому обоснованы эффективные способы формирования морально-культурных ценностей студентов, обработана новая модель студента инновационного типа.
3. Теоретически проанализированы межличностные взаимоотношения преподаватель-студент в контексте современных образовательных реформ в процессе формирования морально-культурных ценностей.

Практическая значимость исследования обусловлена анализом результатов социологических опросов, на основе чего обработана новая модель студента инновационного типа.

Результаты исследования могут стать успешной основой для разработки и внедрения новых профессиональных программ в вузе с учетом нового

инновационного типа формирования морально-культурных ценностей студентов.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений: Она составляет 168 компьютерных страниц, содержит 1 рисунок, 11 таблиц, 18 диаграмм.

SARGSYAN ASIA ORAZBEK

NEW APPROACH TO THE PROBLEM OF FORMATION OF MORAL AND CULTURAL VALUES OF STUDENTS

Candidate thesis on pedagogical sciences 13.00.01 -“Theory and history of pedagogics”. The defense of the dissertation will be held at 14:00, on _____, 2016, at the Yerevan State University. Address: 0025, Abovyan str. 52a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, Room 203.

SUMMARY

The relevance of research. Historical and social change, redefining the system of moral and cultural values, changing value orientations, their social and group polarization, socio-economic, educational and cultural reforms suggest a new approach to the problem of formation of moral and cultural values of students.

Social, social-economic crisis have deep effects on the youth, especially in the process of socialization of the students’ personality, contribute to social tensions.

The existence of society the negative factors in the spiritual life are accompanied by distortion of the educational and cultural processes that lead to re-defining of moral and cultural values in the majority of young people, sometimes to the loss of these values.

The material values and objectives become of primary importance; the idea of cognitive and moral self-improvement, self-education, and comprehensive, harmonious creativity development loses its meaningful importance.

The aim of this study is to justify the formation of the moral and cultural values of students in the new socio-economic conditions and in the context of globalization with the help of in-depth scientific and theoretical analysis of the problem and the processing of the results of sociological research among students.

The objectives of the study include the following;

- To interpret the meaning of "moral and cultural value" based on an analysis of philosophical, psychological, pedagogical, axiological literature;
- To identify the main directions of development of the moral and cultural values of nowadays college students;

- To interpret the ratio of national and universal values in the context of globalization in the formation of an innovative type of students;
- To analyze the relationship between teacher-student under rethink the system of moral and cultural values;
- To develop and use the results of sociological research to justify a new model of moral and cultural values such as innovation of the modern student.

The scientific innovation of the research

1. The analyzed and re-interpreted philosophical, psychological and pedagogical, axiological foundations of "value" the concept.
2. The revealed ratio of national and universal values in the context of globalization in various social institutions.
3. The processed new innovative model of students in reforming higher education environment, based on the levels of formation of moral and cultural values.
4. The conduct surveys on the issue of formation of moral and cultural values of students and the result analysis.

The theoretical significance of the research

1. The identified and analyzed theoretically features of formation of moral and cultural values of students in the socio-economic conditions and globalization, interpreted the essence of the concept of "moral and cultural value".
2. The analyzed and re-proved effective ways of formation of moral and cultural values of students processed the students' new innovative model.
3. The theoretically analyzed interpersonal relationships teacher-student in the context of current educational reforms in the process of formation of moral and cultural values.

The practical significance of the study is the result analysis of social surveys which brought to the new innovative model of student. The results can be the basis for the successful development and introduction of new vocational programs in the high educational institutes taking into account the new innovative type of formation of moral and cultural values of students.

The thesis structure. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, list of references and applications. It has 168 computer pages, 1 figure, 11 tables and 18 charts.